ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ. ՀԱՄԱՌՈՏ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Արտակ Շաքարյան

2002թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) հաղթանակով. 1987թ. ի վեր այն դարձավ առաջին կուսակցությունը, որը ստացավ խորհրդարանի աթոռների հստակ մեծամասնությունը: Ձախակողմյան Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) հաղթահարեց համամասնական ընտրացուցակների 10%-ոց ընտրաշեմը և տեղ գրավեց խորհրդարանում: ԱԶԿ-ն ստացավ քվեների մոտ 34%-ը, ՀԺԿ-ն՝ 20%: Փաստորեն 46%-ի ձայնը ոչ մի ազդեցություն չունեցավ ընտրությունների վրա, քանի որ մնացած բոլոր կուսակցությունները չկարողացան հաղթահարել 10%-ոց ընտրաշեմը (*տե՛ս նկար 1 և աղյուսակներ 1, 2*):

Աղյուսակ 1

Թուրքիայի 2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքները[1]

Ընդհանուր քվեատուփ	172.143
Ընտրողների ընդհանուր թիվը	41.407.015
Քվեարկածների ընդհանուր թիվը	32.753.386
Վավեր քվեների ընդհանուր թիվը	31.510.007
Արտասահմանում ընտրողների թիվը	115.459
Արտասահմանում քվեարկածների ընդհանուր թիվը	115.459
Արտասահմանում վավեր քվեների ընդհանուր թիվը	113.782
Մասնակցության համամասնությունը	79.10%
Պատգամավորների թիվը	550

Գործող կառավարության կոալիցիայի անդամները կրեցին ամենածանր կորուստները: 1999թ. խորհրդարանական ընտրությունների համեմատ կոալիցիայի ամենահզոր Ժողովրդավարական ձախ կուսակցության (ԺՁԿ) ձեռք բերած քվեները նվազեցին մինչև

[1] http://www.belgenet.com/ayrinti.php?yil_id=14&il_id=0

1,2%, Ազգայնական շարժում կուսակցությունը (ԱՇԿ) կորցրեց 9,6%, իսկ Մայր հայրենիք կուսակցությունը (ՄՀԿ)՝ 12,9% քվե: Այսպիսով, կոալիցիայի կուսակցությունները միասին կորցրին 39% քվե՝ 1999թ. ապրիլի 18-ի խորհրդարանական ընտրությունների համեմատ:

Նկար 1



Աղյուսակ 2

2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրությունները Թուրքիայում[1]

Բնակչություն	67.803.927
Վիլայեթներ	81
Ընտրատարածք	85
Ընտրողների հարաբերակցությունը բնակչության համեմատ	61.07%
Ընտրաշեմը	10%
Կին պատգամավորներ (թիվը-հարաբերակցությունը)	24 - 4.36%
Տղամարդ պատգամավորներ (թիվը-հարաբերակցությունը)	526 - 95.64%
Նոր պատգամավորներ (թիվը-հարաբերակցությունը)	490 - 89.09%
Հին պատգամավորներ (թիվը-հարաբերակցությունը)	60 - 10.91%

Ընդդիմության երկու հիմնական կուսակցությունները նույնպես գրանցեցին վատ ցուցանիշներ. իսլամիստական Երջանկություն կուսակցությունը (ԵԿ) կորցրեց 12,9% քվե, կենտրոնամետ Ճշմարիտ ուղի կուսակցությունը (ՃՈՒԿ) «անկում ապրեց» 2,5%-ով (*տե՛ս աղյուսակ 3):*

Պետք է նշել, որ թուրք ընտրողների նախապատվությունները բավական փոփոխական են: Բազմակուսակցական համակարգի ավելի քան կեսդարյա պատմության ընթացքում յուրաքանչյուր ընտրության ժամանակ գրանցվում է մոտ 23%-ոց շարժ: Ընտրությունների արդյունքներն ուսումնասիրելիս պետք է նաև նկատի ունենալ 1980-ական թթ.

[1] Սիիրթում ընտրությունները թարմացվել են 2003թ. մարտի 9-ին, որոնց շնորհիվ խորհրդարան մտավ ԱԶԿ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: 2003թ. մարտի 9-ի ընտրություններին մասնակցեցին ԱԶԿ-ն, ՀԺԿ-ն, Աշխատավորական կուսակցությունն ու Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը: Այս աղյուսակի թվերն ընդգրկում են նաև Սիիրթում տեղի ունեցած ընտրության արդյունքները: http://www.belgenet.com/ayrinti.php?yil_id=14&il_id=0

հետո թուրքական կուսակցական համակարգում տիրող իրավիճակը: 1980-ական թթ. նկատվող ընտրողների նախապատվությունների բարձր փոփոխականությունն ավելի շատ պայմանավորված էր կուսակցությունների փակմամբ ու դրանց միավորումներով: Ինչևէ, վերջին երեք ընտրություններին՝ 1995թ., 1999թ., 2005թ., մենք տեսնում ենք, որ ընտրազանգվածը շարունակում է փոխել իր նախապատվությունները:

Ըստ *աղյուսակ 3-ի,* ընտրազանգվածի գրեթե կեսը փոխել է նախընտրած կուսակցությունը 1999-2002թթ. ընկած ժամանակահատվածում: Եթե մենք խմբավորենք կուսակցական համակարգը գաղափարական խմբերում՝ ծայրահեղ ձախ, կենտրոնամետ ձախ, կենտրոնամետ աջ, ծայրահեղ աջ՝ իսլամամետ ու ազգայնական, ապա կտեսնենք, որ ընտրողների մոտ 20%-ն այդ երեք տարիների ընթացքում փոխել է խումբը: Բացի ՀԺԿ-ից ու ԴԵՀԱՓ-ից (Ժողովրդավարական ժողովրդական շարժում՝ քրդական կուսակցություն), որը ժառանգել է իր նախորդի՝ ՀԱԴԵՓ-ի քուրդ ընտրազանգվածը, չկա այլ կուսակցություն, որը պահպանած լիներ 1999թ. քվեների տոկոսային մակարդակը: ԱԶԿ-ն ու Երիտասարդական կուսակցությունը (ԵրիտԿ) նոր հիմնված կուսակցություններ էին, որոնք երկուսն էլ ստացան նշանակալի աջակցություն: 2002թ. նոյեմբերի ընտրություններին ԵրիտԿ-ն դեռևս անծանոթ էր ու չուներ ընտրական ավանդույթ, իսկ ԱԶԿ-ն հանդես էր գալիս որպես Բարօրություն (ԲԿ) և Առաքինություն կուսակցությունների (ԱԿ) ժառանգորդ՝ այդ առումով մրցակից հանդիսանալով ԵԿ-ին: Կարճ ասած, հարաճուն փոփոխականությունը կարծես ձեռնտու էր նոր կենտրոնամետ աջ կուսակցություններին:

2002թ. իսլամամետ և ազգայնական կուսակցություններն ընդհանուր առմամբ հասան իրենց ընտրազանգվածի աջակցության գագաթնակետին՝ հավաքելով մոտ 53%, ինչն ամենից բարձր ցուցանիշն է թուրքական քաղաքականության պատմության մեջ: Որպես այդպիսին այս խումբը մոտ 3,3 անգամ մեծ է, քան կենտրոնամետ աջ կուսակցությունները և մոտ 2,5 անգամ մեծ է, քան կենտրոնամետ ձախ կուսակցությունները: Սակայն հարցն այն է, թե արդյոք ընտրազանգվածի այս աջակցությունը կլինի կայուն: Եթե նախկին տրամաբանությունը շարունակվի, ապա հաջորդ ընտրությունները ոչ միայն կարձանագրեն ԱԶԿ ընտրազանգվածի կորուստ, այլև կստեղծեն մեկ այլ, նոր կենտրոնամետ աջ հաղթող:

1980-ական թթ. հետո ականատես ենք դառնում նաև թուրքական կուսակցական համակարգի մասնատվածությանը: Չնայած սահմանափակող 10%-ոց ընտրաշեմին, մինչև 2002թ. ընտրությունները բազմաթիվ կուսակցությունների էր հաջողվում վայելել ընտրողների աջակցությունն ու մուտք գործել խորհրդարան: Սակայն այս ձեռքբերումից հետո կուսակցությունները ավելի փոքր կուսակցությունների ու անկախների էին մասնատվում արդեն խորհրդարանում:

Աղյուսակ 3

1999-2002թթ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներն ու կուսակցական համակարգի ընդհանուր բնութագրիչները

կուսակցություն	**քվեների մաս-նաբաժինը (%)**		**ավելի կամ պակաս (%)**	**աթոռները խորհրդարանում**	
	1999թ.	**2002թ.**		**1999թ.**	**2002թ.**
Ժողովրդավարական ձախ կուսակցություն (*Demokratik Sol Parti-DSP*)	22.19%	1.22%	-20.97%	136	0
Ազգայնական շարժում կուսակցություն (*Milliyetçi Hareket Partisi-MHP*)	17.98%	8.34%	-9.64%	129	0
Առաքինություն կուսակցություն (*Fazilet Partisi-FP*)*	15.41%	2.48%	-12.93%	111	0
Մայր հայրենիք կուսակցություն (*Anavatan Partisi-ANAP*)	13.22%	5.13%	-8.09%	86	0
Ճշմարիտ ուղի կուսակցություն (*Doğru Yol Partisi-DYP*)	12.01%	9.55%	-2.46%	85	0
Հանրապետական ժողովրդական կուսակցություն (*Cumhuriyet Halk Partisi-CHP*)	8.71%	19.40%	+10.69%	0	178
Ժողովրդի ժողովրդավարական կուսակցություն (*Halkın Demokrasi Partisi-HADEP*)**	4.75%	6.23%	+1.48%	0	0
Մեծ միասնություն կուսակցություն (*Büyük Birlik Partisi-BBP*)	1.46%	1.02%	-0.44%	0	0
Արդարություն և զարգացում կուսակցություն (*Adalet ve Kalkınma Partisi-AKP*)	0%	34.28%	+34.28%	0	363
Երիտասարդական կուսակցություն (*Genç Parti-GP*)	0%	7.25%	+7.25%	0	0
Անկախներ***	0.87%	0.99%	+0.12%	3	9
Ընդամենը՝	**96.60%**	**95.89%**		**550**	**550**
Այլ կուսակցություններ	3.40%	4.11%	+0.71%		
Փոփոխականությունը	20.15%	50.91%	****		
Խորհրդարանում չներկայացվածների %-ը	18.32%	45.33%			
Ծայրահեղ ձախ (ծձ)	6.02%	7.27%			
Կենտրոնամետ ձախ (կձ)	31.35%	21.77%			
Կենտրոնամետ աջ (կա)	26.77%	16.13%			
Իսլամամետ ու ազգայնական (իա)	34.85%	53.37%			
Գաղափարական փոփոխականությունը	12.70%	20.00%			

* 1983թ. հուլիսի 19-ից մինչև 1998թ. հունվարի 16-ը այն կոչվում էր Բարօրություն կուսակցություն (*Refah Partisi-RP*), որը փակումից հետո վերանվանվեց Առաքինություն կուսակցություն (*Fazilet Partisi-FP*)՝ 1997թ. դեկտեմբերի 17-2001թ. հունիսի 22, իսկ ապա փոխեց անվանումը՝ դառնալով Երջանկություն կուսակցություն (*Saadet Partisi-SP*): [http://www.millisimge.de/postakutusu/erbakan_mi_serbakan_mi.htm]

** 2002թ. այն փոխեց իր անվանումը՝ Ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն (*Demokratik Halk Partisi-DEHAP*):

*** 1950թ. 9, 1954թ.՝ 10, իսկ 1969թ.՝ 13 անկախներ տեղ ստացան խորհրդարանում:

**** Ամենաբարձր (գաղափարական) փոփոխականությունը, որը երբևէ եղել է թուրքական կուսակցական համակարգում:

Մասնատվածություն կա նաև ընտրազանգվածում: Բավականին թվով կուսակցություններ են կարողանում հավաքել 4-14% ձայն: 1987թ. այդ մակարդակի էին ԺՁԿ-ն ու ԲԿ-ն, 1991թ. ԺՁԿ-ն հասավ 10%-ի, իսկ ԲԿ-ԱՇԿ կոալիցիան ստացավ մոտ 17%: 1995թ.

այդ մակարդակում էին ՀԺԿ-ն, ԺՁԿ-ն, ՀԱԴԵՓ-ն ու ԱՇԿ-ն: Ի վերջո, 1999թ. ՄՀԿ-ն, ՀԺԿ-ն, ՃՈՒԿ-ը, ՀԱԴԵՓ-ն ու ԱԿ-ը հայտնվեցին 4-14% մակարդակում, իսկ ԱՇԿ-ն ու ԺՁԿ-ն ստացան ավելի քիչ՝ համապատասխանաբար 18% ու 22% (*տե՛ս աղյուսակ 3):*

Նույն մասնատվածության տրամաբանությանը հետևում ենք նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ (*տե՛ս հավելվածներ 3, 5*):

Ինչևէ, վերադառնալով 2002թ. ընտրություններին՝ տեսնում ենք, որ միայն երկու կուսակցության է հաջողվում հաղթահարել 10%-ոց ընտրաշեմը, 5 կուսակցություն (ՄՀԿ, ՃՈՒԿ, ԱՇԿ, ԵրիտԿ, ԴԵՀԱՓ) մնում են 4-10%-ի արանքում, իսկ ԺՁԿ-ն ու ԵԿ-ն հավաքում են մոտ 2-ական %: Այլ կերպ ասած՝ թուրք ընտրազանգվածը մնում է շատ փոփոխական և բավական մասնատված:

Թեև թուրք մի շարք փորձագետներ կարծիք են հայտնում, թե ընտրազանգվածը կարող է միավորել մասնատված համակարգը մեկ կամ երկու հիմնական կուսակցություններում, սակայն իրականում այդ կարծիքն ավելի շատ առնչվում է տեսական ոլորտին: Հաշվի չեն առնվում հասարակության սոցիալական, տնտեսական, ազգային, դավանաբանական, ինչպես նաև աշխարհագրական տարբերությունները, որոնք մեծ ազդեցություն ունեն ընտրությունների արդյունքների վրա:

Այսպես, 1950-1999թթ. ընտրությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս Թուրքիայի ընտրազանգվածը ըստ աշխարհագրական սկզբունքի բաժանել հետևյալ շրջանների.

- արևելյան և հարավարևելյան շրջաններ,
- մերձափնյա շրջաններ՝ Սև ծովի արևելյան ափերից մինչև Միջերկրական ծովի արևելյան ափերը, ներառյալ Թրակիան ու Էգեյան ավազանը,
- մնացյալ Թուրքիան[1]:

Աղյուսակ 4

2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները Կարսում[2]

կուսակցություն	քվե (%)	քվե (քանակ)	պատգամավորների թիվը
ԴԵՀԱՓ	19,58%	23 659	-
ԱԶԿ	17,24%	20 831	2
ՀԺԿ	16,74%	20 227	1
ԱՇԿ	11,80%	14 257	-
Անկախ	11,39%	13 767	-
ՃՈՒԿ	10,65%	12 875	-

Սոցիալ-տնտեսական բնութագրիչներով, ինչպես նաև քաղաքական նախապատ-

[1] http://www.milliyet.com.tr/ozel/siyaset/secim2004/default.asp?ID=17
[2] http://www.belgenet.com/ayrinti.php?yil_id=14&il_id=936
Ընտրությունների արդյունքներից երևում է, որ չնայած ԴԵՀԱՓ-ը հավաքել է ավելի շատ քվեներ, սակայն չի ստացել և ոչ մի պատգամավորական տեղ, քանի որ երկրի մասշտաբով չի կարողացել հաղթահարել 10%-ոց ընտրաշեմն ու չի անցել խորհրդարան:

վություններով այս երեք տարածաշրջանները ցուցաբերում են շարունակական մոտեցում: Օրինակ, արևելյան ու հարավարևելյան շրջանները սոցիալ-տնտեսական և մշակութային առումներով ամենից քիչ զարգացածն են, իսկ քաղաքական նախապատվության վրա ազդում է ազգային գործոնը: Այդտեղ ավանդաբար ուժեղ են քրդական ծագմամբ կուսակցությունները՝ ԴԵՓ/ՀԱԴԵՓ (1990-ական թթ.) և ԴԵՀԱՓ (2002թ.) (*տե՛ս աղյուսակներ 4, 5*):

Աղյուսակ 5

2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները Դիարբեքիրում[1]

կուսակցություն	քվե (%)	քվե (քանակ)	պատգամավորների թիվը
ԴԵՀԱՓ	56,12%	236 689	-
ԱԶԿ	15,96%	67 289	8
ՀԺԿ	5,92%	24 963	2

Թուրքիայի մասշտաբով ծովափնյա շրջանները սոցիալ-տնտեսական առումով ամենից զարգացածն են: Նրանց քաղաքական նախապատվությունը հիմնականում կենտրոնամետ է:

Փոքրասիական սարահարթային շրջանները սոցիալ-տնտեսական զարգացածությամբ միջին դիրք են գրավում վերոհիշյալ երկու տարածաշրջանների համեմատ: Նրանք ներկայացնում են թուրքական ազգայնական ու իսլամամետ ընտրազանգվածը (*տե՛ս հավելվածներ 1, 2*):

Թուրքական ընտրական համակարգում մեծ խնդիր է 10%-ոց արգելքը, որի արդյունքում 1987թ. ի վեր ընտրազանգվածի 14-19%-ը մշտապես հնարավորություն չի ունենում ներկայացված լինել խորհրդարանում: 1987թ. ընտրություններում այդ թիվը կազմում էր 19,8%, երբ խորհրդարանից դուրս մնացին ԺԶԿ-ն, ԱՇԿ-ն և ԲԿ-ն: 1991թ. ԱՇԿ-ԲԿ կոալիցիան այդ թիվը հասցրեց նվազագույնի (*տե՛ս հավելված 6*):

Ինչևէ, 1995թ. քրդական հարցի նկատմամբ տրամագծորեն հակառակ տեսակետներ ունեցող թուրքական ազգայնական ԱՇԿ-ն ու էթնիկ քրդական ՀԱԴԵՓ-ը դուրս մնացին խորհրդարանից, իսկ խորհրդարանում չներկայացված ընտրազանգվածի տոկոսը կազմեց 14,4: 1999թ. ընտրություններին ԱՇԿ-ն մտավ խորհրդարան, սակայն դուրս մնաց ՀԺԿ-ն, իսկ խորհրդարանում չներկայացված մնաց ընտրողների քվեների 19%-ը[2]:

Այդ թիվը գագաթնակետին հասավ 2002թ. ընտրություններին՝ 45%: Որպես հիմնական պատճառ նշվում է այն փաստը, որ ընտրություններից առաջ չկազմավորվեց ոչ մի մեծ նախընտրական կոալիցիա: Սակայն ուշագրավ է այն, որ չնայած ԱԶԿ-ն ստացավ այնքան պատգամավորական աթոռ, որ կարող է Սահմանադրության մեջ փոփոխու-

[1] http://www.belgenet.com/ayrinti.php?yil_id=14&il_id=92
[2] http://www.belgenet.com

թյուններ մտցնել, սակայն, այդուհանդերձ, այդ առավելությունը հավասար չէ երկրի մասշտաբով իր ստացած քվեների տոկոսային հարաբերակցությանը: Այսինքն՝ ԱԶԿ-ի ընդունած որոշումները իրականում արտացոլում են ոչ թե Թուրքիայի ընտրազանգվածի մեծամասնության, այլ՝ փոքրամասնության շահերը:

Խորհրդարանից դուրս մնացած կուսակցություններից է քրդական ԴԵՀԱՓ-ը, որը միշտ տուժել է 10%-ոց ընտրաշեմի պատճառով: 2002թ. այն ՄՀԿ-ից, ԵԿ-ից, ԺՁԿ-ից ու ՄՄԿ-ից ավելի քվե հավաքեց, դարձավ երկրի՝ վարկանիշով վեցերորդ կուսակցությունը, սակայն կրկին չկարողացավ մուտք գործել խորհրդարան: 10%-ոց արգելքը ոչ մի կերպ չի իջեցվում 5%-ի նաև քրդերին խորհրդարան ներս չթողնելու համար: Հետևաբար, քանի որ քրդական կուսակցությունները չեն կարողանում մուտք գործել Թուրքիայի Ազգային մեծ ժողով (ԹԱՄԺ), ապա նրանց քվեներից օգտվում են տվյալ ընտրատարածքից խորհրդարան անցած կուսակցությունները: Այսպես, ՀԱԴԵՓ-ի քվեներից 1995թ. և 1999թ. օգտվեց ԲԿ/ԱԿ իսլամիստական կուսակցությունը, իսկ 2002թ.՝ ԱԶԿ-ն (*տե՛ս աղյուսակներ 4, 5*):

Ընտրությունների արդյունքներից երևում է, որ չնայած ԴԵՀԱՓ-ը հավաքել է ավելի շատ քվեներ, սակայն չունի և ոչ մի պատգամավոր, քանի որ երկրի մասշտաբով չի կարողացել հաղթահարել 10%-ոց ընտրաշեմը և չի անցել խորհրդարան: Մեխանիզմն այնպիսին է, որ ԴԵՀԱՓ-ի փոխարեն ընտրատարածքից պատգամավորական տեղ ստանալու իրավունք է ձեռք բերում այն կուսակցությունը, որն անցել է խորհրդարան և ընտրատարածքում հավաքել է համեմատաբար առավել թվով ձայներ:

Թուրք ընտրազանգվածի քաղաքական նախապատվությունն ուսումնասիրելիս տեսնում ենք հստակ կապ ընտրություններ անցկացնող կուսակցության և կամ կոալիցիայի օրոք տնտեսական իրավիճակի ու նրանց ստացած քվեների միջև: Օրինակ, 2001թ. խոր տնտեսական ճգնաժամից հետո ԺՁԿ-ԱՇԿ-ՄՀԿ կոալիցիան, որը 1999թ. հավաքել էր շուրջ 54% քվե, 2002թ. նոյեմբերին հավաքեց ընդհանուր առմամբ միայն մոտ 15%:

Թուրքիայում ընտրողների քաղաքական նախապատվության կարևորագույն չափանիշներից է կրոնադավանաբանական պատկանելությունը: Հասարակության մեջ կրոնական տարրի ակտիվացման դեպքում մենք նկատում ենք իսլամիստական կուսակցություններին ցուցաբերվող աջակցության աճ: Հակառակ պարագայում աճ է ապրում ձախ կուսակցությունների վարկանիշը: Այդ համատեքստում հասարակության մեջ ազգայնական տրամադրությունների վերելքը նպաստում է աջ կուսակցությունների հաղթանակին:

Բացի վերոհիշյալից, հարկ է առանձնացնել նաև երկու կարևոր փոքրամասնությունների՝ ալևիներին ու քրդերին: Ըստ տարբեր հաշվարկների, այսօր քրդերի թիվը Թուրքիայում հասնում է միջինը 10-12 միլիոնի, իսկ ալևիներինը՝ մոտ 5,5 մլն[1]: Ինչպես

[1] http://countrystudies.us/turkey/23.htm

հայտնի է, Թուրքիայի քաղաքական դաշտում քրդերը ներկայացված են ՀԱԴԵՓ/ԴԵՀԱՓ կուսակցությունով: Համարվում է, որ ալևիներին ամենից մոտ կանգնած կուսակցությունը ՀԺԿ-ն է: Մյուս կողմից՝ սուննի իսլամիստական ԱԶԿ-ն ու ԵԿ-ն, ըստ ամենայնի, ալևիների համար հանդես են գալիս հակառակ դիրքերից:

ԺՁԿ (Ժողովրդավարական ձախ կուսակցություն)
DSP (Demokratik Sol Partisi)

Հիմնվել է 1985թ. Ռահշան Էջևիթի կողմից, որը Բյուլենթ Էջևիթի կինն է: Բ.Էջևիթին այդ ժամանակ արգելված էր մասնակցել քաղաքական կյանքին[1]): Կենտրոնամետ ձախ այս կուսակցությունը ղեկավարվել է Բ.Էջևիթի կողմից 1987թ. ի վեր:

1987թ. խորհրդարանական ընտրություններում հավաքել է 8,54% քվե և չի կարողացել մտնել խորհրդարան: 1991թ. խորհրդարանական ընտրություններում 10,54% ձայնով մտել է խորհրդարան ու ստացել 7 պատգամավորական աթոռ, որոնք, սակայն, հետագայում հասել են երեքի՝ կուսակցությունից պատգամավորների դուրս գալու արդյունքում:

1995թ. խորհրդարանական ընտրություններում հավաքելով 14,64% ձայն՝ խորհրդարանում ստացել է 76 աթոռ:

ԺՁԿ-ն կողմ է եղել Եվրամիության (ԵՄ) անդամակցությանը, չնայած ժամանակին քննադատում էր ԵՄ հետ կնքված Մաքսային համաձայնագիրը[2]:

1999թ. ապրիլին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների ժամանակ սեփական քարոզարշավում ԺՁԿ-ն մեծապես օգտագործեց այն փաստը, որ Թուրքիայում ահաբեկչական կազմակերպություն համարվող Քրդստանի բանվորական կուսակցության առաջնորդ Աբդուլահ Օջալանը ձերբակալվել է Բ.Էջևիթի վարչապետության օրոք: Այդ հանգամանքը էապես նպաստեց կուսակցության հաղթանակին. այն ստացավ 22,19% քվե և 550 տեղանոց Թուրքիայի Ազգային մեծ ժողովում գրավեց 136 աթոռ: Բ.Էջևիթը հինգերորդ անգամ դարձավ վարչապետ:

Սակայն 2001թ. տնտեսական ճգնաժամը խիստ թուլացրեց կոալիցիոն կուսակցության ավագ գործընկեր ԺՁԿ-ի դիրքերը, որին հավելվեց նաև Բ.Էջևիթի առողջական վատ վիճակը: 2002թ. ամռանը շատ ականավոր կուսակիցներ լքեցին կուսակցության շարքերը (այդ թվում արտաքին գործերի նախկին նախարար Իսմայիլ Ջեմը, որը հիմնեց նոր կուսակցություն՝ Նոր Թուրքիա, Քեմալ Դերվիշը, որն անցավ ԺՀԿ և այլն), իսկ վարչապետը հասարակական ճնշման ներքո ստիպված եղավ հայտարարել վաղաժամ ընտրությունների մասին:

2002թ. նոյեմբերի ընտրություններում ԺՁԿ-ն ստացավ միայն 1,21% ձայն:

Այժմ ԺՁԿ նախագահն է նախկին պետնախարար Զեքի Սեզերը[3]:

---

[1] 1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման արդյունքում Թուրքիայում փակվեցին բոլոր կուսակցությունները, իսկ քաղաքական գործիչներին միաժամանակ արգելվեց զբաղվել քաղաքականությամբ:

[2] http://www.dsp.org.tr/tarihce/

[3] http://www.dsp.org.tr/baskanlarimiz/

ԱՇԿ (Ազգայնական շարժում կուսակցություն)
MHP (Milliyetçi Hareket Partisi)

Ծայրահեղ ազգայնական կուսակցություն, որի անդամներն ու գաղափարակիցները հայտնի են նաև «Գորշ գայլեր» անվամբ: Հիմնվել է 1969թ. Ալփարսլան Թյուրքեշի կողմից: Հանդես է գալիս որպես կիսառազմականացված կառույց: 1980թ. ռազմական հեղաշրջումից հետո ԱՇԿ-ն փակվեց, իսկ Թյուրքեշն ու այլոք կանգնեցին դատարանի առջև՝ 1980-ական թթ. սկզբին քաղաքական-հասարակական մի քանի գործիչների սպանության համար:

1995թ. Թյուրքեշին թույլատրվում է վերականգնել ԱՇԿ-ն ու մասնակցել ընտրություններին, որոնց արդյունքում կուսակցությունը ստացավ ձայների 8,5%-ը: 1997թ. ապրիլի 4-ին մահացած Թյուրքեշի թաղմանը մասնակցել են 300 000 հոգի՝ ներառյալ գրեթե բոլոր կուսակցությունների ղեկավարները:

Թյուրքեշին հաջորդեց Դևլեթ Բահչելին: 1999թ. ապրիլին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱՇԿ-ն դարձավ երկրորդ կուսակցությունը, ստացավ 129 պատգամավորական աթոռ ու ԺՁԿ-ի և ՃՈւԿ-ի հետ կազմեց կոալիցիոն կուսակցություն[1]:

2002թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրություններում ԱՇԿ-ն ստացավ միայն ձայների 8,34%-ը:

Չնայած խորհրդարանական ընտրություններում կրած պարտությանը, ԱՇԿ-ն մնաց երկրի առաջատար կուսակցություններից մեկը: 2004թ. մարտի 28-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ԱՇԿ-ն գրավեց երրորդ տեղը՝ զիջելով միայն ԱԶԿ-ին ու ՀԺԿ-ին[2]:

[1] http://www.allaboutturkey.com/parti.htm
[2] *Сафрастян Р.,* Возвращение «серых волков»: Консервативная партия в политической жизни Турции (1983-1985), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Երևան, 2004, էջ 254: Տե ս նաև *Հավելված 4:*

ԱԶԿ (Արդարություն և զարգացում կուսակցություն)
AKP (Adalet ve Kalkınma Partisi)

Հիմնվել է 2001թ. որպես իսլամիստական կուսակցություն, Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Աբդուլահ Գյուլի կողմից, որոնք երկուսն էլ եղել են Բարօրություն և Առաքինություն իսլամիստական կուսակցությունների անդամներ:

Ինչպես հայտնի է, ԱԶԿ-ն ու ԵԿ-ն հանդիսանում են Բարօրություն ու Առաքինություն կուսակցությունների ժառանգորդները: Դեռ 2000թ. Թուրքիայում ակտիվորեն քննարկվում էր ԱԿ-ում «ավանդականների» (առաջնորդն էր Ն.Էրբաքանը, որի քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի հետևանքով առաջնորդի դերը ստանձնել էր Ռ.Քութանը: Երկուսն էլ հետո իրար փոխարինեցին ԵԿ նախագահի պաշտոնում) ու «նորարարների» (առաջնորդն էր Ռ.Թ. Էրդողանը՝ այժմ ԱԶԿ նախագահ, որի քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի հետևանքով որոշ ժամանակ առաջնորդի դերը ստանձնել էր Ա.Գյուլը) միջև իշխանության համար պայքարը կուսակցության ներսում[1]: Ի վերջո, «նորարարներն» առանձնացան ԵԿ-ից ու հիմնեցին Արդարություն և զարգացում կուսակցությունը:

Կրելով իսլամիստական ազդեցություն՝ ԱԶԿ-ն, սակայն, իրեն պատկերացնում է եվրոպական քաղաքականության քրիստոնեա-դեմոկրատական դաշտում: Ամեն դեպքում, ԱԶԿ-ն մի շարք տարբերություններ ունի ԵԿ-ից, օրինակ՝ Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցում[2]: 2002թ. նոյեմբերի ընտրություններում ԱԶԿ-ն ստացավ 34% ձայն՝ վերջին քսան տարվա ընթացքում Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ մի կուսակցություն կարողացավ առանց կոալիցիայի կառավարություն կազմել: ԱԶԿ-ն հաղթանակն ամրապնդեց 2004թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, որոնց արդյունքում ստացավ 41,9% ձայն (*տե՛ս հավելված 4*):

Կուսակցությունն ինքը, սակայն, նման է կոալիցիայի: Ստեղծված լինելով շատ կարճ ժամանակում՝ նախընտրական փուլում այն ընդգրկել է անդամներ, որոնք եկել են տարբեր կուսակցություններից՝ ԵԿ, ԱՇԿ, ՄՀԿ և այլն: Սա չէր կարող մնալ անհետևանք: 2005թ. արդեն սկսվում է ԱԶԿ այդ անդամների հեռացումը կուսակցության շարքերից: Առաջին քայլն արեց նախկինում ՄՀԿ անդամ, ԱԶԿ կառավարությունում մշակույթի և զբոսաշրջության նախարար Էրքան Մումջուն, որի հրաժարականը շատ անսպասելի էր ու վրդովեց հասարակությանը[3]: Մումջուի հեռացումից հետո սկսեցին խոսել նաև նախկինում ԱՇԿ-ին ու ԵԿ-ին անդամակցող ԱԶԿ մի շարք անդամների՝ կուսակցությունից դուրս գալու հավանականության մասին, որն էլ որոշ ժամանակ անց իրականություն դարձավ:

[1] http://www.belgenet.com/parti/fp1k_hy.html
[2] http://www.zaman.com.tr/?hn=122841&bl=politika
[3] http://www.zaman.com.tr/?hn=144731&bl=politika

ԵԿ (Երջանկություն կուսակցություն)
SP (Saadet Partisi)

1997թ. հունիսի 18-ին Բարօրություն կուսակցության (*RP-Refah Partisi*) առաջնորդ Ն.Էրբաքանի կոալիցիոն կառավարությունը զինվորականության ճնշումների ներքո հրաժարական տվեց, 1998թ. հունվարի 16-ի[1] Սահմանադրական դատարանի որոշմամբ ԲԿ գործունեությունը կասեցվեց, իսկ Էրբաքանին արգելվեց զբաղվել քաղաքական գործունեությամբ: ԲԿ առաջնորդներն անմիջապես ստեղծեցին Առաքինություն կուսակցությունը (ԱԿ, գոյատևել է 1997թ. դեկտեմբերի 17-ից մինչև 2001թ. հունիսի 22-ը), որին անդամագրվեցին ԲԿ բոլոր անդամները:

Ռեջայի Քութանի ղեկավարած ԱԿ-ն մասնակցեց 1999թ. ապրիլին տեղի ունեցած թե՛ խորհրդարանական, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, սակայն կորցրեց ԲԿ առաջատար դիրքը և 21,3% ձայնով ԹԱՄԺ-ում ստացավ 111 աթոռ, դարձավ ԺՁԿ-ից ու ԱՇԿ-ից հետո երրորդ կուսակցությունը[2]:

2001թ. փակված Առաքինություն կուսակցության փոխարեն հիմնվեց ԵԿ-ն:

2002թ. խորհրդարանական ընտրություններում ԵԿ-ն հավաքեց ընդամենը 2,49% ձայն: 2003թ. Էրբաքանի՝ քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը հանվեց, և նա ընտրվեց կուսակցության նախագահ: 2004թ. սակայն նա ստիպված եղավ դուրս գալ կուսակցությունից, և կուսակցության նախագահ ընտրվեց Քութանը[3]:

2004թ. մարտի 28-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կուսակցությունը հավաքեց ընդամենը 4% քվե:

[1] http://www.millisimge.de/postakutusu/erbakan_mi_serbakan_mi.htm
[2] http://www.allaboutturkey.com/parti.htm
[3] http://www.saadetpartisi.org.tr/default2.asp?x=569&y0

ՄՀԿ (Մայր հայրենիք կուսակցություն)
ANAP (Anavatan Partisi)

Հիմնվել է 1983թ. մայիսի 20-ին Թուրգութ Օզալի կողմից, որը երկար ժամանակ նաև Թուրքիայի նախագահն էր: Կենտրոնամետ աջ կուսակցություն է[1]: 1983-1991թթ. ներկայացված է եղել Թուրքիայի կառավարության կազմում: 1995թ. ՃՈՒԿ-ի հետ կազմել է կարճատև կոալիցիա (կոալիցիայի անվանումն էր *ANA YOL՝ ANAvatan և doğru YOL* կուսակցությունների անուններից), ապա վերադարձել է իշխանության 1997թ. հուլիսից մինչև 1998թ. նոյեմբերը: Կուսակցության ղեկավար Մեսութ Յըլմազը երկրի վարչապետն էր:

Կուսակցության օրոք Թուրքիայի տնտեսությունը 1980-ական թթ. ծանոթացավ շուկայական համակարգին, 1987թ. ԵՄ անդամակցության հայտ ներկայացրեց:

ՄՀԿ-ն ծանր պարտություն կրեց 1999թ. ապրիլին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում՝ ստանալով 14% ձայն, դառնալով Թուրքիայի չորրորդ կուսակցությունը և գրավելով 86 պատգամավորական աթոռ: Սակայն կուսակցությունն ավելի մեծ կորուստներ կրեց 2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում, երբ ՄՀԿ-ն հավաքեց ընդամենը 5,12% քվե ու չմտավ խորհրդարան:

2004թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կուսակցությունը հավաքեց ընդամենը 2,5% քվե:

Ներկայում կրկին քննարկվում է ՄՀԿ և ՃՈՒԿ՝ այլ անվամբ միավորման գաղափարը: Թեև այդ կուսակցությունները միշտ էլ միմյանց համարել են մրցակիցներ, սակայն հիմնումից ի վեր նրանց թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ծրագրերը գրեթե նույնն են եղել: 2005թ. փետրվարին ՃՈՒԿ նախագահ Աղարն ու ՄՀԿ նախկին նախագահ տիկին Նեսրին Նասը հանդիպում են ունեցել վերոհիշյալ հարցը քննարկելու նպատակով[2]: Ակնկալվում է, որ հավանական միավորմանը նոր թափ հաղորդի ԱԶԿ շարքերը լքած մշակույթի ու զբոսաշրջության նախկին նախարար Էրքան Մումջուն, որը նախկինում եղել էր ՄՀԿ անդամ: Մումջուի կուսակցություն վերադարձով ՄՀԿ-ն խորհրդարանում պատգամավորների թվաքանակով դարձավ երրորդը, իսկ ս.թ. ապրիլի 2-ին կուսակցության նոր նախագահ ընտրվեց նույն ինքը՝ Էրքան Մումջուն[3]:

Ի դեպ, մոտավորապես նույն այդ ժամանակ ՄՀԿ նախկին նախագահ Մեսութ Յըլմազի գործը քննվում էր Թուրքիայի գերագույն դատարանում[4]: Նախկին վարչապետը մեղադրվում էր «*Türkbank*»-ի մրցույթի հետ կապված պաշտոնեական դիրքի չարաշահման մեջ[5]:

[1] http://www.allaboutturkey.com/parti.htm
[2] http://www.zaman.com.tr/?hn=110112&bl=politika
[3] http://www.zaman.com.tr/?hn=159102&bl=politika
[4] http://www.stargazete.com/index.asp?haberID=66666
[5] http://www.belgenet.com/dava/yucedivan_13.html

ՃՈՒԿ (Ճշմարիտ ուղի կուսակցություն)
DYP (Doğru Yol Partisi)

Հիմնվել է 1983թ. Սուլեյման Դեմիրելի կողմից: Պահպանողական է, ընտրազանգվածը հիմնականում գյուղական բնակչությունն է: Չնայած այն հանգամանքին, որ ՃՈՒԿ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ծրագրերը շատ նման են ՄՀԿ ծրագրերին, այդ երկու կուսակցությունները գրեթե միշտ էլ հանդես են եկել որպես մրցակիցներ: Օրինակ, հիմնականում աջակողմյան կուսակցությունների միջև առկա անհամաձայնությունն էր պատճառը, որ Բարօրություն իսլամիստական կուսակցությունը 1995թ. հասավ իշխանության:

1991թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ՃՈՒԿ-ը ստացավ կոալիցիոն կառավարություն կազմելու իրավունք: 1993թ. Սուլեյման Դեմիրելը ընտրվեց երկրի նախագահ, ուստի կուսակցության նախագահի, ինչպես նաև երկրի վարչապետի պաշտոնում նշանակվեց Թանսու Չիլերը[1]:

1999թ. ապրիլի խորհրդարանական ընտրություններում ՃՈՒԿ-ը դարձավ Թուրքիայի հինգերորդ կուսակցությունը 12% ձայնով[2]:

2002թ. խորհրդարանական ընտրություններում կուսակցությունը ստացավ ընդամենը 9,55% քվե և չկարողացավ մտնել խորհրդարան: 2002թ. նոյեմբերին խորհրդարան մուտք գործելու համար կուսակցությանը չբավարարեց միայն 0,5% ձայն, և ՃՈՒԿ-ը, օգտվելով երկրում առկա հակաքրդական տրամադրություններից, փորձեց ԹԱՄԺ մտնել քրդական ԴԵՀԱՓ կուսակցության հաշվին՝ պնդելով, որ վերջինս ընտրությունների ժամանակ խախտումներ է կատարել: Եթե սա ապացուցվեր, ապա ԴԵՀԱՓ-ի ստացած քվեները չեղյալ կհայտարարվեին, ինչի արդյունքում էլ ՃՈՒԿ-ը կհաղթահարեր 10%-ոց ընտրաշեմը և իրավունք կստանար ԱԶԿ-ի հետ կիսել խորհրդարանական աթոռները: Այդ հանգամանքը, բնականաբար, չէր կարող ձեռնտու լինել իշխող կուսակցությանը: Ի վերջո, դատարանում ՃՈԻԿ հայցը դրական լուծում չստացավ: Այնուամենայնիվ, այսօր ՃՈՒԿ-ը ներկայացված է ԹԱՄԺ-ում՝ ունի 6 պատգամավոր, որոնք եղել են անկախ կամ դուրս են եկել իրենց նախկին կուսակցություններից և անդամակցել ՃՈՒԿ-ին:

Ընտրությունների հաջորդ օրը՝ 2002թ. նոյեմբերի 4-ին, Թանսու Չիլերը հայտարարեց կուսակցության համաժողով հրավիրելու և նախագահի պաշտոնից հրաժարվելու մասին: 2002թ. նոյեմբերի 21-ին Էլյազիգի ընտրացուցակներով ընտրված անկախ պատգամավոր Մեհմեդ Աղարը անդամակցեց ՃՈՒԿ-ին, որի միջոցով կուսակցությունը ներկայացվեց ԹԱՄԺ-ում: 2002թ. դեկտեմբերին Աղարն ընտրվեց ՃՈՒԿ նախագահ[3]:

2004թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կուսակցությունը հավաքեց 10,1% քվե՝ գրավելով 4-րդ տեղը:

[1] http://www.allaboutturkey.com/politikaci1.htm
[2] http://www.allaboutturkey.com/parti.htm
[3] http://www.kronoloji.gen.tr/kronoloji.php3?sayfa=12&kategori=partiler

ՀԺԿ (Հանրապետական ժողովրդական կուսակցություն)
CHP (Cumhuriyet Halk Partisi)

Հիմնվել է 1923թ. Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի կողմից, այժմ նախագահն է Դենիզ Բայքալը: 1995թ. Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցության (ՍԺԺԿ) հետ միավորվելուց հետո[1] համարվում է ազդեցիկ կենտրոնամետ ձախ կուսակցություն: Սակայն այդ միավորումից հետո շատ քաղաքական գործիչներ, որոնք նախկինում անդամակցում էին ՍԺԺԿ-ին, դուրս եկան կուսակցությունից՝ միանալով ԺՁԿ-ին:

1999թ. ապրիլի խորհրդարանական ընտրություններում ՀԺԿ-ն հավաքեց միայն 8,7% ձայն և առաջին անգամ պատմության մեջ չմտավ խորհրդարան: Բայքալը պարտության մեղավոր համարվեց և հրաժարական տվեց[2]:

2002թ. ընտրություններում նա վերընտրվեց կուսակցության նախագահ: 2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրություններում կուսակցությունը ստացավ 19,39% ձայն և դարձավ խորհրդարանում երկրորդ կուսակցությունը՝ դառնալով ընդդիմություն: Այսօր ՀԺԿ-ն ԹԱՄԺ-ում ունի 162 աթոռ:

2004թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կուսակցությունը հավաքեց 18,2% ձայն:

2002թ. խորհրդարանական ընտրություններից հետո ՀԺԿ շարքերի մեջ տարրալուծվեց Նոր Թուրքիա կուսակցությունը[3], որը հիմնվել էր 2002թ. ընտրությունների նախաշեմին և 2002թ. ընտրություններում հավաքել էր ընդամենը 1% ձայն[4]: Այդ ամենով հանդերձ մի շարք վերլուծաբաններ կարծում են, թե ՀԺ կուսակցությունը գտնվում է մասնատման եզրին[5]: Սրա հաստատումն է 2005թ. հունվարին նախագահ Դենիզ Բայքալի դեմ կուսակցության անդամ Մուստաֆա Սարըգյուլի սկզբնավորած շարժումը, որը բավական լայն աջակցություն ստացավ[6]: Սակայն 2005թ. մարտի 25-ին կուսակցության բարձրագույն կարգապահական խորհուրդը հեռացրեց Սարըգյուլին կուսակցության շարքերից[7]:

Ներկուսակցական ընդդիմությունը թանկ նստեց ՀԺԿ-ի վրա՝ վերջին երկու տարվա ընթացքում 14 պատգամավոր դուրս եկավ կուսակցությունից:

[1] http://www.tbmm.gov.tr/ambar/partiler/partiler.htm
[2] http://www.allaboutturkey.com/parti.htm
[3] http://www.zaman.com.tr/?hn=130573&bl=politika
[4] http://www.electionworld.org/turkey.htm
[5] http://www.zaman.com.tr/?hn=130149&bl=politika
[6] http://www.zaman.com.tr/?hn=134423&bl=politika
[7] http://www.zaman.com.tr/?hn=156757&bl=politika

ԴԵՀԱՓ[1] (Ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն)/ ՀԱԴԵՓ (Ժողովրդական ժողովրդավարական կուսակցություն) *DEHAP (Demokratik Halk Partisi)/HaDeP (Halk Demokratik Partisi)*

Քրդական քաղաքական կուսակցություն. հիմնվել է 1994թ. *DeP* (*Demokratik Partisi*) կուսակցության փոխարեն, որը փակվել էր դատարանի որոշմամբ: ՀԱԴԵՓ-ը մասնակցեց 1995թ. խորհրդարանական ընտրություններին և ստացավ 4,2% ձայն[2]:

Այն միակ օրինական կուսակցությունն է, որ ներկայացնում է քուրդ ժողովրդի շահերը Թուրքիայում (ի տարբերություն այդ երկրում օրենքից դուրս հայտարարված Քրդստանի բանվորական կուսակցությանը): ՀԱԴԵՓ-ը մասնակցեց 1999թ. խորհրդարանական ու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Թեև կուսակցությունը բազմաթիվ տեղեր գրավեց, մասնավորապես, հարավարևելյան Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմիններում՝ Աղրը, Բաթման, Բինգյոլ, Դիարբեքիր, Սիիրթ, Վան և այլն, սակայն կրկին չկարողացավ հաղթահարել 10%-ոց ընտրաշեմը՝ ԹԱՄԺ անցնելու համար: 1999թ. ընտրություններից հետո կուսակցությունն արգելվեց Թուրքիայի Սահմանադրական դատարանի կողմից և վերաբացվեց ԴԵՀԱՓ (Ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն) անվամբ:

2002թ. խորհրդարանական ընտրություններում կուսակցությունը հավաքեց 6,22% ձայն:

[1] ԴԵՀԱՓ և ՀԱԴԵՓ հապավումները ներկայացված են թուրքերենով՝ լրահոսում դրանց տարածվածության պատճառով:
[2] http://www.allaboutturkey.com/parti.htm

ԵրիտԿ (Երիտասարդական կուսակցություն)
GP (Genç Partisi)

Հիմնվել է 2002թ. գործարար Ջեմ Ուզանի կողմից: 2002թ. Վերածնունդ կուսակցության նախագահ Հասան Ջելալը կուսակցությունը վաճառեց Ջեմ Ուզանին[1]: Ուզանը հետագայում կուսակցությունը վերանվանեց Երիտասարդական[2]: Սրանով Ուզանը ընտրություններին մասնակցելու իրավունք ստացավ[3]:

Ընդամենը 3-ամսյա քաղաքական կենսագրություն ունեցող կուսակցությունը 2002թ. նոյեմբերի ընտրություններում ստացավ 7,24% ձայն:

Այս կուսակցությունը կարողացավ իր կողմը գրավել հիմնականում ԱՇԿ և ՃՈՒԿ ընտրազանգվածին:

Կուսակցությունը ընտրություններից հետո դիմել էր դատարան արդյունքներն անվավեր ճանաչելու խնդրանքով, սակայն մերժում ստացավ[4]:

Հետագայում հանրահավաքների ժամանակ Ռեջեփ Էրդողանի ու ԱԶԿ հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու մեղադրանքով Ջեմ Ուզանի դեմ դատական գործ հարուցվեց[5]:

ԱԶԿ-ն կազմակերպված հարձակում սկսեց Ուզան ընտանիքի տնտեսական կարողությունների դեմ, բացվեցին տնտեսական հանցագործությունների հետ կապված քրեական գործեր: «Ուզան» հոլդինգի ձեռքից վերցվեց Թուրքիայում հանրահայտ «Սթար» թերթը:

2004թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կուսակցությունը հավաքեց ընդամենը 2,6% քվե:

[1] http://www.radikal.com.tr/haber.php?haberno=47324
[2] http://www.radikal.com.tr/haber.php?haberno=45405
[3] http://www.radikal.com.tr/haber.php?haberno=47536
[4] http://www.radikal.com.tr/haber.php?haberno=63958
[5] http://www.radikal.com.tr/haber.php?haberno=106915

ՍԺԺԿ (Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն)
SHP (Sosyal Demokrat Halk Partisi)

Հիմնվել է 2002թ. մայիսի 24-ին Մուրադ Քարայալչընի կողմից[1]: Չպետք է շփոթել նույն հապավումով մեկ այլ կուսակցության՝ *SHP* (*Sosyal Demokrat Halkci Partisi*)[2] հետ, որի անդամ են եղել նույն Մուրադ Քարայալչընն ու իր համախոհները: Այդ կուսակցությունը իշխանական կոալիցիայի մաս է կազմել, որի կազմում Քարայալչընը նույնիսկ եղել է արտաքին գործերի նախարար[3]: 1985թ. նոյեմբերի 3-ին հիմնված կուսակցությունը 1995թ. փետրվարի 19-ին միաձուլվեց ՀԺԿ-ի հետ:

Քարայալչընը իր թեկնածությունն առաջադրեց 2004թ. մարտի 28-ին տեղի ունեցած Անկարայի քաղաքապետի ընտրություններում[4], որի ընթացքում նրան օժանդակեցին ալևիական ուժերը, մասնավորապես Ալևի բեքթաշի դաշինքի նախագահ Ալի Դողանը[5]:

2004թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Սոցիալ-ժողովրդավարական կուսակցությունը կոալիցիայի մեջ մտավ ԴԵՀԱՓ-ի հետ, ինչի շնորհիվ նրանք միասին գրավեցին հինգերորդ տեղը 4,9% ձայներով (*տե՛ս հավելված 4*):

ԴԵՀԱՓ-ի հետ արդյունավետ համագործակցության համար հետագայում Մուրադ Քարայալչընին որոշ շրջանակներ առաջ էին քաշում որպես օմբուդսմենի թեկնածու[6]:

2005թ. սկզբին ի հայտ եկած ՀԺԿ խարխլման գործընթացի հետևանքով 2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում պատգամավորական և ոչ մի աթոռ չստացած ՍԺԺԿ-ն ԹԱՄԺ-ում այսօր ունի 5 խորհրդարանական, որոնք կուսակցություն են եկել ՀԺԿ-ից[7]:

ԺԲԿ (Ժողովրդի բարձրացման կուսակցություն)
HYP (Halkın Yükselişi Partisi)

2005թ. փետրվարին Ստամբուլի ընտրացուցակներով Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր ընտրված անկախ պատգամավոր Յաշար Նուրի Օզթյուրքը հիմնեց ԺԲԿ-ն: Թուրքիայում գործող կուսակցությունների թիվը հասավ 48-ի:

[1] http://www.milliyet.com.tr/2002/05/24/son/sontur08.html
[2] «*Sosyal Demokrat Halkci Partisi*»-ն հայերենում և գրեթե բոլոր այլ լեզուներում, ըստ էության, թարգմանվում է նույն կերպ, ինչ «*Sosyal Demokrat Halk Partisi*»-ին՝ Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն:
[3] http://www.shp.org.tr/basin_goster.asp?ID=106
[4] http://www.shp.org.tr/basin_goster.asp?ID=44
[5] http://www.shp.org.tr/basin_goster.asp?ID=60
[6] http://www.shp.org.tr/basin_goster.asp?ID=91
[7] http://www.shp.org.tr/basin_goster.asp?ID=124

Հավելված 1

Թուրքիայի Ազգային մեծ ժողովում պատգամավորական տեղերի բաշխումը ըստ կուսակցությունների (2005թ. մայիսի 25-ի դրությամբ)

կուսակցություն	պատգամավորների թիվը
Արդարություն և զարգացում կուսակցություն (ԱԶԿ)	356
Հանրապետական ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ)	161
Մայր հայրենիք կուսակցություն (ՄՀԿ)	10
Ճշմարիտ ուղի կուսակցություն (ՃՈւԿ)	3
Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն (ՍԺԺԿ)	5
Ժողովրդի բարձրացման կուսակցություն (ԺԲԿ)	1
Անկախ պատգամավորներ	11
Թափուր տեղ	3
Ընդամենը՝	**550**

Հավելված 2

1999թ. ապրիլի 18-ին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները[1]

ա. ընտրատարածք, բ. հաղթանակած կուսակցություն

ա.	բ.	ա.	բ.	ա.	բ.
Ադանա (*Adana*)	ԺՁԿ	Էրզրում (*Erzurum*)	ԱԿ	Մուշ (*Muş*)	ՀԱԴԵՓ
Ադըյաման (*Adıyaman*)	ԱԿ	Էսքիշեհիր (*Eskişehir*)	ԺՁԿ	Նևշեհիր (*Nevşehir*)	ԱՇԿ
Աֆիոն (*Afyon*)	ԱՇԿ	Գազիանթեփ (*Gaziantep*)	ԱՇԿ	Նիղդե (*Niğde*)	ԱՇԿ
Աղրը (*Ağn*)	ՀԱԴԵՓ	Գիրեսուն (*Giresun*)	ԺՁԿ	Օրդու (*Ordu*)	ԺՁԿ
Աքսարայ (*Aksaray*)	ԱՇԿ	Գյումուշհանե (*Gümüşhane*)	ԱՇԿ	Օսմանիե (*Osmaniye*)	ԱՇԿ
Ամասիա (*Amasya*)	ԱՇԿ	Հաքքարի (*Hakkari*)	ՀԱԴԵՓ	Ռիզե (*Rize*)	ՄՀԿ
Անկարա (*Ankara*)	ԺՁԿ	Հաթայ (*Hatay*)	ԱՇԿ	Սաքարիա (*Sakarya*)	ԱԿ
Անթալիա (*Antalya*)	ԱՇԿ	Իչել (*İçel*)	ԱՇԿ	Սամսուն (*Samsun*)	ԺՁԿ
Արդահան (*Ardahan*)	ՃՈՒԿ	Իգդիր (*Iğdır*)	ՀԱԴԵՓ	Սիիրթ (*Siirt*)	ՀԱԴԵՓ
Արդվին (*Artvin*)	ՃՈՒԿ	Ըսփարթա (*Isparta*)	ԱՇԿ	Սինոփ (*Sinop*)	ԺՁԿ
Այդընն (*Aydın*)	ԺՁԿ	Ստամբուլ (*İstanbul*)	ԺՁԿ	Սիվաս (*Sivas*)	ԱԿ
Բալըքեսիր (*Balıkesir*)	ԺՁԿ	Իզմիր (*İzmir*)	ԺՁԿ	Շանլըուրֆա (*Şanlıurfa*)	ՃՈՒԿ
Բարթընն (*Bartın*)	ԺՁԿ	Քահրամանմարաշ (*Kahramanmaraş*)	ԱՇԿ	Շըրնաք (*Şırnak*)	ՀԱԴԵՓ
Բաթման (*Batman)*	ՀԱԴԵՓ	Քարաբյուք (*Karabük*)	ԱՇԿ	Թեքիրդաղ (*Tekirdağ*)	ԺՁԿ
Բայբուրթ (*Bayburt*)	ԱԿ	Քարաման (*Karaman*)	ԱՇԿ	Թոքաթ (*Tokat*)	ԱՇԿ
Բիլեջիկ (*Bilecik*)	ԺՁԿ	Կարս (*Kars*)	ՀԱԴԵՓ	Տրապիզոն (*Trabzon*)	ԱՇԿ
Բինգյոլ (*Bingöl*)	ԱԿ	Քաստամոնու (*Kastamonu*)	ԺՁԿ	Թունջելի (*Tunceli*)	անկախ
Բիթլիս (*Bitlis*)	ԱԿ	Քայսերի (*Kayseri*)	ԱՇԿ	Ուշաք (*Uşak*)	ԺՁԿ
Բոլու (*Bolu*)	ԺՁԿ	Քըրըքքալե (*Kırıkkale*)	ԱՇԿ	Վան (*Van*)	ՀԱԴԵՓ
Բուրդուր (*Burdur*)	ԱՇԿ	Քըրքլարելի (*Kırklareli*)	ԺՁԿ	Յալովա (*Yalova*)	ԺՁԿ
Բուրսա (*Bursa*)	ԺՁԿ	Քըրշեհիր (*Kırşehir*)	ԱՇԿ	Յոզգաթ (*Yozgat*)	ԱՇԿ
Չանաքքալե (*Çanakkale*)	ԺՁԿ	Քիլիս (*Kilis*)	ՃՈՒԿ	Զոնգուլդաք (*Zonguldak*)	ԺՁԿ
Չանքըրը (*Çankırı*)	ԱՇԿ	Քոջաելի (*Kocaeli*)	ԺՁԿ		
Չորում (*Çorum*)	ԱՇԿ	Քոնիա (*Konya*)	ԱԿ		
Դենիզլի(*Denizli*)	ԺՁԿ	Քյութահիա (*Kütahya*)	ՃՈՒԿ		
Դիարբեքիր (*Diyarbakır*)	ՀԱԴԵՓ	Մալաթիա (*Malatya*)	ԱԿ		
Էդիրնե (*Edirne*)	ԺՁԿ	Մանիսա (*Manisa*)	ԺՁԿ		
Էլազըղ (*Elazığ*)	Անկախ	Մարդին (*Mardin*)	ՀԱԴԵՓ		
Էրզինջան (*Erzincan*)	ԱՇԿ	Մուղլա (*Muğla*)	ԺՁԿ		
ողջ Թուրքիայում՝ ԺՁԿ					

[1] http://www.belgenet.com/secim/secim1999.htm, http://www.belgenet.com/ayrinti.php?yil_id=13

Հավելված 3

1995թ. դեկտեմբերի 24-ին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները[1]

ա. ընտրատարածք, բ. հաղթանակած կուսակցություն

ա.	բ.	ա.	բ.	ա.	բ.
Ադանա (*Adana*)	ԺՁԿ	Էրզրում (*Erzurum*)	ԲԿ	Մուշ (*Muş*)	ԲԿ
Ադըյաման (*Adıyaman*)	ԲԿ	Էսքիշեհիր (*Eskişehir*)	ԺՁԿ	Նևշեհիր(*Nevşehir*)	ԲԿ
Աֆիոն (*Afyon*)	ՃՈՒԿ	Գազիանթեփ (*Gaziantep*)	ԲԿ	Նիղդե (*Niğde*)	ՃՈՒԿ
Աղրը (*Ağrı)*	ԲԿ	Գիրեսուն (*Giresun*)	ՄՀԿ	Օրդու (*Ordu*)	ՄՀԿ
Աքսարայ (*Aksaray*)	ԲԿ	Գյումուշհանե (*Gümüşhane*)	ԲԿ	Ռիզե (*Rize*)	ՄՀԿ
Ամասիա (*Amasya*)	ԲԿ	Հաքքարի (*Hakkari*)	ՀԱԴԵՓ	Սաքարիա (*Sakarya*)	ԲԿ
Անկարա (*Ankara*)	ՄՀԿ	Հաթայ (*Hatay*)	ՀԺԿ	Սամսուն (*Samsun*)	ՄՀԿ
Անթալիա (*Antalya*)	ՃՈՒԿ	Իչել (*İçel*)	ՄՀԿ	Սիիրթ (*Siirt*)	ԲԿ
Արդահան (*Ardahan*)	ՃՈՒԿ	Իգդիր (*Iğdır*)	ՀԱԴԵՓ	Սինոփ (*Sinop*)	ՄՀԿ
Արդվին (*Artvin*)	ՄՀԿ	Ըսփարթա (*Isparta*)	ՃՈՒԿ	Սիվաս (*Sivas*)	ԲԿ
Այդին (*Aydın*)	ՃՈՒԿ	Ստամբուլ (*İstanbul*)	ԲԿ	Շանլըուրֆա (*Şanlıurfa*)	ԲԿ
Բալըքեսիր (*Balıkesir*)	ՃՈՒԿ	Իզմիր (*İzmir*)	ԺՁԿ	Շըրնաք (*Şırnak*)	ՃՈՒԿ
Բարթըն (*Bartın*)	ԺՁԿ	Քահրամանմարաշ (*Kahramanmaraş*)	ԲԿ	Թեքիրդաղ (*Tekirdağ*)	ԺՁԿ
Բաթման (*Batman*)	ՀԱԴԵՓ	Քարաբյուք (*Karabük*)	ՃՈՒԿ	Թոքաթ (*Tokat*)	ԲԿ
Բայբուրթ (*Bayburt*)	ԲԿ	Քարաման (*Karaman)*	ԲԿ	Տրապիզոն (*Trabzon*)	ՄՀԿ
Բիլեջիկ (*Bilecik*)	ՃՈՒԿ	Կարս (*Kars*)	ԲԿ	Թունջելի (*Tunceli*)	ՀԺԿ
Բինգյոլ (*Bingöl*)	ԲԿ	Քաստամոնու (*Kastamonu*)	ՃՈՒԿ	Ուշաք (*Uşak*)	ԺՁԿ
Բիթլիս (*Bitlis*)	ԲԿ	Քայսերի (*Kayseri*)	ԲԿ	Վան (*Van*)	ՀԱԴԵՓ
Բոլու (*Bolu*)	ԲԿ	Քըրըքքալե (*Kırıkkale*)	ԲԿ	Յալովա (*Yalova*)	ՄՀԿ
Բուրդուր (*Burdur*)	ՃՈՒԿ	Քըրքլարելի (*Kırklareli*)	ԺՁԿ	Յոզգաթ (*Yozgat*)	ԲԿ
Բուրսա (*Bursa*)	ՃՈՒԿ	Քըրշեհիր (*Kırşehir*)	ՄՀԿ	Զոնգուլդաք (*Zonguldak*)	ԺՁԿ
Չանաքքալե (*Çanakkale*)	ՃՈՒԿ	Քիլիս (*Kilis*)	ՃՈՒԿ		
Չանքըրը (*Çankırı*)	ԲԿ	Քոջաելի (*Kocaeli*)	ԲԿ		
Չորում (*Çorum*)	ԲԿ	Քոնիա (*Konya*)	ԲԿ		
Դենիզլի (*Denizli*)	ՃՈՒԿ	Քյութահիա (*Kütahya*)	ԲԿ		
Դիարբեքիր (*Diyarbakır*)	ՀԱԴԵՓ	Մալաթիա (*Malatya*)	ԲԿ		
Էդիրնե (*Edirne*)	ԺՁԿ	Մանիսա (*Manisa*)	ՃՈՒԿ		
Էլազըղ (*Elazığ*)	ԲԿ	Մարդին (*Mardin*)	ՄՀԿ		
Էրզինջան (*Erzincan*)	ԲԿ	Մուղլա (*Muğla*)	ՃՈՒԿ		
ողջ Թուրքիայում՝ ԲԿ					

[1] http://www.belgenet.com/ayrinti.php?yil_id=12

Հավելված 4

1999թ. ապրիլի 18-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների (մեծ քաղաքների քաղաքապետեր) պատկերը[1]

կուսակցություն	քվե (%)	քաղաքապետերի ընդհանուր թիվը
ԱԿ	23,37%	4
ԺՁԿ	19,28%	4
ՄՀԿ	16,87%	2
ՀԺԿ	16,52%	3
ԱՇԿ	10,35%	1
ՃՈւԿ	7,38%	
ՀԱԴԵՓ	3,82%	1

ԱԿ	Անկարա, Ստամբուլ, Կայսերի, Քոնիա
ԺՁԿ	Էսքիշեհիր, Իչել, Իզմիր, Բուրսա
ՄՀԿ	Ադանա, Սամսուն
ՀԺԿ	Անթալիա, Գազիանթեփ, Քոջաելի
ԱՇԿ	Էրզրում
ՀԱԴԵՓ	Դիարբեքիր

[1] http://www.belgenet.com/bsehir_ayrinti.php?yil_id=1

Հավելված 5

1999թ. և 2004թ. Թուրքիայում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները[1]

վիլայեթներ	1999թ.	2004թ.	վիլայեթներ	1999թ.	2004թ.
	կուս. (%)	կուս. (%)		կուս. (%)	կուս. (%)
1	2	3	1	2	3
Ադանա (*Adana*)	ՄՀԿ 26.4%	ԱԶԿ 39.8%	Քըրշեհիր (*Kırşehir*)	ԱՇԿ 35.9%	ԱԶԿ 34.73%
Ադըյաման (*Adıyaman*)	ԱԿ 27%	ԱԶԿ 45.39%	Իզմիթ (*Izmit*)	ՀԺԿ 40.2%	ԱԶԿ 51.02%
Աֆիոն (*Afyon*)	ԱՇԿ 31.1%	ԱԶԿ 50.68%	Քոնիա (*Konya*)	ԱԿ 48.5%	ԱԶԿ 63.63%
Աղրը (*Ağn*)	ՀԱԴԵՓ 19.6%	ԱԶԿ 49.84%	Քյութահիա (*Kütahya*)	ԱԿ 28.3%	ԱԶԿ 57.59%
Ամասիա (*Amasya*)	ԱՇԿ 24.1%	ԱԶԿ 47.95%	Մալաթիա (*Malatya*)	ԱՇԿ 36.5%	ԱԶԿ 50.75%
Անկարա (*Ankara*)	ԱԿ 33.8%	ԱԶԿ 54.84%	Մանիսա (*Manisa*)	ՄՀԿ 24.3%	ԱԶԿ 37.82%
Անթալիա (*Antalya*)	ՀԺԿ 21.9%	ԱԶԿ 33.3%	Քահրամանմարաշ (*Kahramanmaraş*)	ԱԿ 36.3%	ԱԶԿ 65.49%
Արդվին (*Artvin*)	ՀԺԿ 30.9%	ՀԺԿ 45.65%	Մարդին (*Mardin*)	ՃՈՒԿ 25.2%	ԵԿ 26.96%
Այդըն (*Aydın*)	ՄՀԿ 37.5%	ԱԶԿ 45.4%	Մուղլա (*Muğla*)	ՀԺԿ 37.2%	ՀԺԿ 43.1%
Բալիքեսիր (*Balıkesir*)	ՄՀԿ 29.5%	ԱԶԿ 44.4%	Մուշ (*Muş*)	ԱՇԿ 21.7%	ԱԶԿ 35.66%
Բիլեջիկ (*Bilecik*)	ՀԺԿ 42.9%	ԱԶԿ 37.17%	Նևշեհիր (*Nevşehir*)	ԱԿ 30.1%	ԱԶԿ 45.67%
Բինգյոլ (*Bingöl*)	ՀԱԴԵՓ 26.6%	ԱԶԿ 39.81%	Նիդդե (*Niğde*)	ԱՇԿ 32%	ԱՇԿ 38.05%
Բիթլիս (*Bitlis*)	ԱԿ 23.4%	ԱԶԿ 28.94%	Օրդու (*Ordu*)	ՄՀԿ 29.1%	ԺՁԿ 38.71%
Բոլու (*Bolu*)	ԺՁԿ 25.8%	ԱԶԿ 47.27%	Ռիզե (*Rize*)	ՄՀԿ 48.4%	ԱԶԿ 52.21%
Բուրդուր (*Burdur*)	ՀԺԿ 31%	ԱԶԿ 45.8%	Սաքարիա (*Sakarya*)	ԱԿ 35.9%	ԱԶԿ 35.36%
Բուրսա (*Bursa*)	ԺՁԿ 29.8%	ԱԶԿ 51.67%	Սամսուն (*Samsun*)	ՄՀԿ 28%	ԱԶԿ 46.25%
Չանաքքալե (*Çanakkale*)	ՀԺԿ 24.5%	ՀԺԿ 46%	Սիիրթ (*Siirt*)	ՀԱԴԵՓ 38.6Ջ	ԱԶԿ 53.53%
Չանքըրը (*Çankırı*)	ԱՇԿ 44.5%	ԱԶԿ 57.78%	Սինոփ (*Sinop*)	ՄՀԿ 23.4%	ԱԶԿ 30.43%
Չորում (*Çorum*)	ԱԿ 31.3%	ԱԶԿ 46.1%	Սիվաս (*Sivas*)	ԱԿ 40.7%	ԱԶԿ 50.57%
Դենիզլի (*Denizli*)	ՃՈՒԿ 22.5%	ԱԶԿ 52%	Թեքիրդաղ (*Tekirdağ*)	ՄՀԿ 29.2%	ԱԶԿ 32.5%
Դիարբեքիր (*Diyarbakır*)	ՀԱԴԵՓ 62.5%	ՍԺԺԿ 61%	Թոքաթ (*Tokat*)	ԱԿ 32%	ԱԶԿ 47.49%
Էդիրնե (*Edirne*)	ՄՀԿ 30.6%	ՀԺԿ 31.94%	Տրապիզոն (*Trabzon*)	ԱԿ 34.3%	ՀԺԿ 35.97%
Էլազըղ (*Elazığ*)	ԱԿ 42.9%	ՃՈՒԿ 38%	Թունջելի (*Tunceli*)	ՀԺԿ 25.6%	ՍԺԺԿ 35.78%
Էրզինջան (*Erzincan*)	ԱՇԿ 33.5%	ԱԶԿ 51.33%	Շ. Ուրֆա (*Ş.Urfa*)	ԱԿ 41.4%	ԱԶԿ 60.35%
Էրզրում (*Erzurum*)	ԱՇԿ 36.4%	ԱԶԿ 61.31%	Ուշաք (*Uşak*)	ԱՇԿ 38.6%	ԱԶԿ 35.13%

[1] http://www.belgenet.com/
http://www.milliyet.com.tr/ozel/siyaset/secim2004/default.asp?ID=17
2004թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Սոցիալ-ժողովրդավարական ժողովրդական (ՍԺԺԿ) կուսակցությունը նախընտրական դաշինք էր կազմել ԴԵՀԱՓ-ի հետ:

1	2	3	1	2	3
Էսքիշեհիր (*Eskişehir*)	ԺՁԿ 42.9%	ԺՁԿ 44.76%	Վան (*Van*)	ՀԱԴԵՓ 44.6%	ԱԶԿ 47.62%
Գազիանթեփ (*Gaziantep*)	ՀԺԿ 32%	ԱԶԿ 54.7%	Յալովա (Yalova)	ՄՀԿ 24.3%	ԱԶԿ 30.26%
Գիրեսուն (*Giresun*)	ՀԺԿ 31.1%	ԱԶԿ 37.99%	Յոզգաթ (*Yozgat*)	ԱՇԿ 41.3%	ԱԶԿ 60.07%
Գյումուշհանե (*Gümüşhane*)	ԱՇԿ 33.3%	ԱՇԿ 35.35%	Զոնգուլդաք (*Zonguldak*)	ԺՁԿ 56.3%	ԱԶԿ 36.64%
Հաքքարի (*Hakkari*)	ՀԱԴԵՓ 55.8%	ԱԺԿ 60.7%	Աքսարայ (*Aksaray*)	ԱՇԿ 46.9%	ԱԶԿ 44.31%
Անթաքիա (*Antakya*)	ՀԺԿ 25.6%	ԱԶԿ 50.09%	Բայբուրթ (*Bayburt*)	ԱՇԿ 31%	ԱԶԿ 30.28%
Ըսփարթա (*Isparta*)	ԱՇԿ 39.5%	ԱԶԿ 49.67%	Քարաման (*Karaman*)	ԱՇԿ 31.7%	ԱԶԿ 41.76%
Մերսին (*Mersin*)	ԺՁԿ 19.4%	ՀԺԿ 34.06%	Քըրըքքալե (*Kırıkkale*)	ԱՇԿ 27.9%	ԱԶԿ 39.18%
Ստամբուլ (*İstanbul*)	ԱԿ 27.5%	ԱԶԿ 45.86%	Բաթման (*Batman*)	ՀԱԴԵՓ 57.2%	ՍԺԺԿ 73.64%
Իզմիր (*İzmir*)	ԺՁԿ 30.5%	ՀԺԿ 47.47%	Շըրնաք (*Şırnak*)	ՄՀԿ 34.8%	ՍԺԺԿ 40.86%
Կարս (*Kars*)	ՄՀԿ 26.3%	ԱԶԿ 48.72%	Բարթին (*Bartin*)	ԺՁԿ 34.1%	ԺՁԿ 60.38%
Քաստամոնու (*Kastamonu*)	ԱՇԿ 29.1%	ԱՇԿ 48.54%	Արդահան (*Ardahan*)	ԺՁԿ 27.7%	Անկախ 26.54%
Քայսերի (*Kayseri*)	ԱԿ 39%	ԱԶԿ 70.24%	Իգդիր (*Iğdır*)	ԱՇԿ 40.2%	ԱՇԿ 42.19%
Քըրքլարելի (*Kırklareli*)	ԱՇԿ 24.2%	ՀԺԿ 31.4%	Օսմանիե (*Osmaniye*)	ԱՇԿ 40%	ԱԶԿ 38.27%
Քարաբյուք (*Karabük*)	ՃՈՒԿ 27.9%	ԱԶԿ 57.4%	Դյուզջե (*Düzce*)	ԱԿ 36.8%	ԱԶԿ 63.9%
Քիլիս (*Kilis*)	ԺՁԿ 30.4%	ԱԶԿ 57.4%			

2004թ. Թուրքիայում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները[1]

2004թ.		
ԱԶԿ	12.534.684 քվե	41.9%
ՀԺԿ	5.448.423 քվե	18.2%
ԱՇԿ	3.135.270 քվե	10.5%
ՃՈՒԿ	3.030.163 քվե	10.1%
ՍԺԺԿ	1.457.766 քվե	4.9%
ԵԿ	1.190.996 քվե	4%
ԵրիտԿ	772.702 քվե	2.6%
ՄՀԿ	739.540 քվե	2.5%
ԺՁԿ	635.768 քվե	2.1%
Աղբյուրը՝		

[1] http://www.belgenet.com/
http://www.milliyet.com.tr/ozel/siyaset/secim2004/default.asp?ID=17

Հավելված 6

1999թ. ապրիլի 18-ին Թուրքիայում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները[1]

կուսակցություն	քվե (%)
ԱԿ	18,40%
ԺՁԿ	15,19%
ՄՀԿ	17,43%
ՀԺԿ	13,83%
ԱՇԿ	15,14%
ՃՈՒԿ	12,75%

[1] http://www.belgenet.com/belediye_ayrinti.php?yil_id=13

Հավելված 7

1991թ. Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները[1]

կուսակցություն	քվե (%)	քվեների ընդհանուր քանակը	պատգամավորների թիվը
ՃՈՒԿ	27.03%	6.600.726	178
ՄՀԿ	24.01%	5.862.623	115
ՁԺԿ	20.75%	5.066.571	88
ԲԿ[2]	16.88%	4.121.355	62
ԺՁԿ	10.75%	2.624.301	7
Այսպիսով, խորհրդարանում ներկայացված չէ ընդամենը 0,58% քվե:			

[1] http://www.belgenet.net/ayrinti.php?yil_id=11

[2] 1991թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԲԿ-ն նախընտրական դաշինք էր կազմել ԱՇԿ-ի հետ:

Կուսակցությունների անվանումների հապավումներ

ԱԶԿ - Արդարություն և զարգացում կուսակցություն (թուրք.՝ *AKP, Adalet ve Kalkınma Partisi*)

ԱԿ - Առաքինություն կուսակցություն (թուրք.՝ *FP, Fazilet Partisi*)

ԱՇԿ - Ազգայնական շարժում կուսակցություն (թուրք.՝ *MHP , Milliyetçi Hareket Partisi*)

ԲԿ - Բարօրություն կուսակցություն (թուրք.՝ *RP, Refah Partisi*)[1]

ԵրիտԿ - Երիտասարդական կուսակցություն (թուրք.՝ *GP, Genç Parti*)

ԵԿ - Երջանկություն կուսակցություն (թուրք.՝ *SP, Saadet Partisi*)

ՀԺԿ - Հանրապետական ժողովրդական կուսակցություն (թուրք.՝ *CHP, Cumhuriyet Halk Partisi*)

ԺՁԿ - Ժողովրդավարական ձախ կուսակցություն (թուրք.՝ *DSP, Demokratik Sol Parti*)

ՄՀԿ - Մայր հայրենիք կուսակցություն (թուրք.՝ *ANAP, Anavatan Partisi*)

ՄՄԿ - Մեծ միասնություն կուսակցություն (թուրք.՝ *BBP, Büyük Birlik Partisi*)

ՃՈւԿ - Ճշմարիտ ուղի կուսակցություն (թուրք.՝ *DYP, Doğru Yol Partisi*)

ՀԱԴԵՓ - Ժողովրդի ժողովրդավարական կուսակցություն (թուրք.՝ *HADEP, Halkın Demokrasi Partisi*)

ԴԵՀԱՓ - Ժողովրդավարական ժողովրդական կուսակցություն (թուրք.՝ *DEHAP, Demokratik Halk Partisi*)

ԺԲԿ - Ժողովրդի բարձրացման կուսակցություն (թուրք.՝ *HYP, Halkın Yükselişi Partisi*)

ՍԺԿ - Սոցիալ-ժողովրդավարական կուսակցություն (թուրք.՝ *SHP, Sosyal Demokrat Partisi*)

[1] Բարօրություն կուսակցությունը (թուրք.՝ *Refah Partisi*) հիմնադրվել է 1983թ. հուլիսի 19-ին՝ Ալի Վուրալի, Մուստաֆա Քոչի, Օսման Ասլանի, Հասան Ցըլմազի և այլոց կողմից: Գործել է մինչև 1998թ. հունվարի 16-ը: Փակվելուց հետո վերանվանվեց Առաքինություն կուսակցության (թուրք.՝ *Fazilet Partisi*). գործել է 1997թ. դեկտեմբերի 17-ից մինչև 2001թ. հունիսի 22-ը: Արդեն 2001թ. Առաքինություն կուսակցությունից առաջացան երկու կուսակցություններ՝ Երջանկություն կուսակցությունը (թուրք.՝ *Saadet Partisi*) ու Արդարություն և զարգացում կուսակցությունը (թուրք.՝ *Adalet ve Kalkınma Partisi*):